Հ·Ս Խ·Հ· ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ
ՀՐԱՀԱՆԳ

ԲՆԱԿՎԱՐՉԿՈՈՊՆԵՐԻՆ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԾԵՆՔԵՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԲՋԻՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

628
Հ-25

ԵՐԵՎԱՆ 1984

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՀՀ—ՍՍՀ

13.953

09 SEP 2013

Հանրագի ազատան Սրբագրող՝ Հ. Մայիլյան

Պատվեր 2568 Տպաքանակ 2000

04 AUG 2010

628
Հ-25 ԱՄ:

27265 / 28278

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԼՈՒԱԶՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԲՋԻՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Բնակարանային տնտեսության մեջ հրդեհները կանխելու նպատակով յուրաքանչյուր բնակվարձկոոպում, տնային վարչության մեջ, բանվորական հանրակացարաններում, բնակիչների ընդհանուր ժողովում, մնայուն բնակիչներից ընտրվում է հրդեհային պահպանության հասարակական լիազոր, իսկ 200 հոգուց ավելի մնայուն բնակիչ ունեցող խոշոր բնակվարձկոոպներում, տնային վարչություններում և հանրակացարաններում, բացի այդ կազմակերպվում է հրդեհային պահպանությանն աջակցող բջիջ, վոչ պակաս քան 5 հոգուց բաղկացած, կամավոր հիմունքներով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հասարակական լիազորները և հրդեհային պահպանության բջիջի անդամները կարող են լինել այն քաղաքացիները, վորոնք ընտրողական իրավունքից չեն զրկված։

2. Հասարակական քաղլիազորները և հրդեհային պահպանությանն աջակցող բջիջները պարտադիր կարգով տոմարագրվում են տվյալ քաղաքի հրդեհային պահպանության պետի մոտ։

3. Ժամանակին հասարակական լիազոր ընտրելու և հրդեհային պահպանությանն աջակցող բջիջ կազմակերպելու պատասխանատվությունը դրվում է բնակվարձկոոպների, տնային վարչությունների և պարտադիր մասի վրա։

4. Նշված ձեռնարկումները բնակվարձկոոպների,

տնային վարչությունների և պարետային մասի կողմից կատարելու հսկողությունը դրվում է տվյալ քաղաքի հրդեհային պահպանության վրա։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԲՋԻՋՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

5. Հասարակական լիազորները և հրդեհային պահպանությանն աջակցող բջիջները պարտավոր են՝

ա) հսկել բնակվարձկոոպների, տնային վարչությունների, հանրակացարանների զբաղեցրած տերիտորիայի և բոլոր շենքերի հակահրդեհային դրության վրա.

բ) հսկել, վորպեսզի բնակվարձկոոպի, տնային վարչության, հանրակացարանների վարչության, ինչպես և անհատ բնակիչներ ժամանակին կատարեն տեղական (շրջ) խորհուրդների հակահրդեհային կանոններն ու վորոշումներն, ինչպես և տվյալ քաղաքի բանվորական ավանի հրդեհային պահպանության առաջարկները.

գ) աջակցություն ցույց տալ տվյալ քաղաքի, բանվորական ավանի հրդեհային պահպանությանը հակահրդեհային ձեռնարկումներ անցկացնելու գործում։

դ) միջոցներ ձեռք առնել անհրաժեշտ հրշեջ սարքավորում ձեռք բերելու և հսկողություն ունենալ, վորպեսզի այդպիսին սարք ու կարգին պահվի։

ե) կազմակերպել իր միջոցներով առաջին ոգնություն և պահպանել բնակիչների գույքը հրդեհի և խորտակումների ժամանակ՝ մինչև հրշեջ խմբի գալը։

զ) ակտիվ մասնակցություն ունենալ ինքնապաշտպանության և հրշեջոդային պահպանության խմբեր կազմակերպելու գործին ինչպես և դրանց կատարած աշխատանքներին.

ը) մասսայականացնել հակահրդեհային ձեռնարկումները և հրշեջ-ոդային պահպանության ձեռնարկումը տվյալ տան բնակիչների մեջ։

6. Նշված ամբողջ աշխատանքը հասարակական

լիազորները և հրդեհային պահպանությանն աջակցող բջիջները կատարում են՝

ա) իրենց նախաձեռնությամբ, ինչպես և հրդեհային պահպանության մարմինների աջակցությամբ վոչ ուշ քան յեռամսյակը մեկ անգամ, բնակիչների մնացած ակտիվի մասնակցությամբ, պարբերաբար հետազոտելով հակահրդեհային տեսանկյունից բնակվարձկոոպի, տնային վարչության, հանրակացարանի զբաղեցրած ամբողջ տերիտորիան և բոլոր շենքերը.

բ) կազմակերպելով բնակչության համար, տվյալ շրջանի բնակվարձկոոպների վարչությունների և հրդեհային պահպանության համաձայնությամբ, զրույցներ, դասախոսություններ, զեկուցումներ և այլն հրդեհային հարցերի շուրջն, ինչպես և ձեռք բերելով և տարածելով հրդեհային գրականություն ու կազմակերպելով հրդեհային անկյուն բջիջի անդամների և տների բնակիչների համար.

գ) սիստեմատիկ պարապմունքներ տանելով բջիջի անդամների և բնակիչների ակտիվի հետ, հրդեհային պահպանության, հրշեջ-ոդային պահպանության հարցերի շուրջն, այլ և հարհանդներ տալով բնակիչների լիազորներին այդ առթիվ։

7. Այն բոլոր վիճելի հարցերը, վորոնք առաջ են գալիս լիազորների կամ հրդեհային պահպանության աջակցող բջիջի կողմից, բնակիչներին արված առաջադրանքների հողի վրա և վրոնք չեն կարողանում տեղում իրենց լուծումն ստանալ, բնակվարձկոոպի վարչության կամ տնային վարչության միջոցով կամ եվ վերջինների դիմադրության են հանդիպում, հանձնվում են հրդեհային պահպանությանը լուծելու համար.

8. Հասարակական լիազորների և հրդեհային պահպանությանն աջակցող բջիջները հաշիվ են տալիս բնակվարձկոոպի վարչությանը և տնային վարչությանը վոչ ուշ քան 6 ամիսը մեկ անգամ, իսկ բնակիչների ընդհանուր ժողովին՝ վոչ ուշ քան տարին մեկ անգամ։

9. Հասարակական լիազորների և հրդեհային պահպանությանն աջակցող բջիջների աշխատանքը տվյալ

քաղաքի հրդեհային պահպանության անմիջաբար ղեկավարում և հրահանգներ տալիս է իր ներկայացուցիչների, հասարակական հրդեհային տեսուչների և քաղ. (շրջ.°) խորհուրդների սեկցիաների կողմից հատուկ նշանակված անդամների միջոցով: Այդ լիազորների և բջիջների գործունեության ընդհանուր ղեկավարությունն իրագործում է հրդեհային պահպանության վարչությունն, ինչպես և տվյալ քաղաքի պրոֆեսիոնալ ու հասարակական կազմակերպությունները:

10. Քաղ. (շրջ) բնակմիությունները իրենց նախահաշիվներում գումարներ են նախատեսում շրջանի հրդեհային պահպանության առաջադրությամբ պարզելու համար այն ակտիվիստ—հարվածային հասարակական լիազորներին և հրդեհային պահպանությանն աջակցող բջիջների անդամներին, որոնք լավագույն աշխատանք են ցույց տվել բնակիչները հրդեհից պահպանելու գործում:

11. Ի զարգացումն այս կանոնադրության Հ.Ս.Խ.Հ.-ն Կոմունժողկոմատի հրդեհային պահպանության Կենտրոնական վարչությունը հրատարակում է որինակելի հրահանգ հասարակական լիազորների և հրդեհային պահպանության աջակցող բջիջների համար:

ՀՐԱՀԱՆԳ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԲՋԻՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Շենքերի, բնակվարձկոոպների և հանրակացարանների հակահրդեհային դրության և վարչության ու բնակիչների կողմից հրդեհային պահպանության վերաբերյալ բոլոր դոյություն ունեցող կանոնները ու պարտադիր վորոշումները ճշտորեն կատարելու վրա մշտական հսկողություն սահմանելու նպատակով նշված կազմակերպություններին կից հիմնվում են հրդեհային պահպանության լիազորներ և աջակցող բջիջներ, վորոնք ղեկավարվում են ներկա հրահանգով:

բ) Աջակցող բջիջներ և հասարակական լիազորներ հիմնելու կարգը, նրանց նպատակները ու խնդիրները, ինչպես և իրավունքները ու պարտականությունները վորոշվում են այդ լիազորների և բջիջների մասին դոյություն ունեցող կանոնադրությամբ, հաստատված Հ.Ս.Խ.Հ. Կոմունժողկոմատի կողմից:

գ) Հրդեհային պահպանության հասարակական լիազորը հրդեհային պահպանության պոստ է հանդիսանում, պատասխանատվություն է կրում տնային վարչություններում, բնակվարձկոոպներում, հանրակացարաններում հրդեհային ապահովության խախտումները վերացնելու նպատակով, ժամանակին և պատշաճ միջոցներ ձեռք առնելու դամար: Իսկ հրդեհային պահպանության բջիջ դոյություն ունենալու դեպքում, բացի այդ, պատասխանատու է նաև բջիջի աշխատանքի և դրության համար:

Իրենց ֆունկցիաների կատարման գծով հասարակական լիազորը և հրդեհային պահպանության բջիջները պարտավոր են՝

1. Հսկել, վորպեսզի բջիջների կազմը ժամանակին և լավագույն անդամներով լրացվի:

2. Պահպանել և ծանոթացնել հրդեհային պահպանության գործին իրենց բջիջի անդամներին:

3. Սիստեմատիկորեն ուսումնասիրել հրդեհային պահպանության և հրշեջ-ոդային պահպանության հարցերը, համապատասխան հրդեհային գրականություն մշակելու և հրդեհային պահպանության մարմիններից պարբերաբար ինստրուկտաժ ստանալու միջոցով:

4. Կանոնավոր կերպով ժողովել բնակարանների պատասխանատու անձանց և դռնապահներին հրդեհային պահպանության և հրշեջ ոդային պահպանության հարցերի վերաբերյալ հրահանգներ տալու համար:

5. Աջակցող բջիջի անդամների միջոցով պրոպագանդ մղել հրշեջ-ոդային պահպանության շուրջն, անց կացնելով բնակվարձկոոպների, տնային վարչությունների և բնակիչների համար դասախոսություններ, դրույցներ և այն հրդեհների, նրանց պատճառների խաղաղ պայմաններում և հրշեջ-ոդային պահպանու-

թյան պայմաններում հրդեհների դեմ պայքարելու մասին, հրավիրելով հատուկ զեկուցողների հրդեհային պահպանությունից։

6. Հողալ ժամանակին ձեռք բերելու հրդեհային Ոստ-ավիաքիմական դրականություն, ինչպես և հրդեհային պահպանության վերաբերյալ վորոշումներ և կարգադրություններ բջիջի անդամներին ծանոթացնելու և տների բնակիչների մեջ պրոպագանդա մղելու համար։

7. Մշտական կապ հաստատել տվյալ քաղաքի հրդեհային պահպանության պետի հետ, ստանալ նրանից անհրաժեշտ ցուցումներ աշխատանքի ժամանակ և այն բոլոր կարելոր խախտումների մասին, վորոնք սպառնում են շենքի հրդեհային ապահովության, անմիջապես հայտնել քաղաքի հրդեհային պահպանության պետին։

8. Բնակվարձկոոպի վարչության, տնային վարչության և բնակիչների ընդհանուր ժողովներում քննել տների հրդեհային ապահովության, ինչպես և աջակցող բջիջների աշխատանքների վերաբերյալ հարցեր, դնելով հաշվետու զեկուցումներ։

9. Վոչ ուշ քան յեռամսյակում մեկ անդամ անցկացնել պրոֆիլակտիվ աշխատանք և ստուգել բնակելի և վոչ բնակելի շենքերի հակահրդեհային դրությունը, հայտաբերել հրդեհի հնարավորության ելեմենտները և միջոցներ ձեռք առնել այդ վերացնելու համար։

Ծանոթություն. — Բնակելի շենքերը կարելի յե հետազոտել միմիայն առավոտյան ժամը 9-ից մինչև յերեկոյան ժամը 9-ը։

10. Հակահրդեհային կանոնները խախտողների մասին հրդեհային լիազորը հայտնում է տնային վարչությանը, հանձնելով գործը ընկերական դատարանին կամ հրդեհային պահպանությանն, այդ անձանց պատասխանատվության յենթարկելու համար։

Ծանոթություն. — Այն դեպքում, յերբ առանձին անհատներ կամ տնային վարչություններ չարամտորեն չեն կատարի հակահրդեհային ձեռնարկումները, ապա հրդեհային լիազորները պարտավոր են անմիջապես հայտնել այդ մասին քաղաքի հրդեհային պահպանության պետին։

11. Բնակելի և վոչ բնակելի շենքեր հետազոտելիս պետք է ղեկավարվել քաղաքի հրդեհային պահպանության տված հրահանգներով և ցուցումներով, հատուկ ուշադրություն դարձնելով հրդեհի հնարավորության հետևյալ հիմնական ելեմենտների վրա՝

ա) Ջեռուցման գործիքների և ծխանցքների վոչ սարքին լինելու և շենքի վայրի մասերից վոչ բավարար (25 սանտ. ավելի քիչ տարածությամբ) բաժանված լինելու, ծխանցքները վոչ ժամանակին և անխնամ մաքրելու, ծխանցքների մեջ ճեղքված քներ, վառարանների տակ յերկաթե թերթեր լինելու, վառարանները չափից ավելի շիկացնելու վրա։

բ) Ժամանակավոր վառարանները սխալ սարքելու կամ առանց հրդեհային պահպանության թույլտվության սարքելու վրա։

գ) Ջեռուցման գործիքների վրա զանազան տեսակի այրվող առարկաներ չորացնելու վրա։

դ) սահմանված նորմայից ավելի քանակությամբ տան մեջ կամ բնակարանում այրվող հեղուկներ պահելու և մանավանդ ջարդվող ամանի մեջ և ջեռուցման գործիքների մոտ պահելու, ինչպես և բաց կրակի կողքին այդ հեղուկներից ոգտվելու վրա։

յե) Ջեռուցման և լուսավորության գործիքներից ոգտվելիս կրակի հետ անզգույշ վարվելու, կրակը ձեռքին վերնահարկերում, նկուղներում, ներքնահարկերում և այլ տեղերում ման գալու, սարայներում, նկուղներում և վերնահարկերում վառարանների չհանգցրած ածուխ պահելու վրա։

զ) պրիմուսներից և կերասինկաներից միջանցքներում և անցքերում ոգտվելու, ինչպես և դրանց հետ անխնամ վարվելու վրա (պրեմուսի մեջ ոդ լցնելը, վառած կերասինկայի և չիկացած պրիմուսների մեջ կերոսին լցնելը և բացի կերասինից նաև բենզինով, լիգրոինով և այլ հեղուկներով վառելը)։

ը) Ելեքտրոհաղորդման վոչ սարքին լինելու, ելեքտրալարերը բացված տեղեր ունենալու, ցանցի ծանրաբեռնվածության, ժամանակավոր հաղորդման վրա։

թ) միջանցքները և սանդուխքների յելքերը փակված լինելու վրա.

ժ) վերնահարկերը և ներքնահարկերն անպետք իրերով լցված լինելու վրա.

ի) առանց հրդեհային պահպանության մարմինների թույլտվության միջնորմներ, հիմնական վերափոխումներ և այլն սարքելու վրա.

լ) բնակվարձկոոպների տերրիտորիայի վրա անցքերը փակելու, բակերն անպետք իրերով լցնելու, վառելափայտ ու այլ վառելիքն անկանոն պահելու, իսկ շինարարական աշխատանքներ կատարելու դեպքում, նաև շինարարական նյութերով, ռանդվածքով և տաշեղներով ծանրաբեռնելու վրա:

12. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ժամանակին ձեռք բերվեն հասարակ հրդեհային սարքավորում (դույլեր, տակառներ, չոր ավազ տոպրակներում, քիմիական հրամարիչներ, նիզեր, բահեր և այլն) սարքին պահվի այդպիսին և ցույց տրվի տների բնակիչներին թե ինչպես պետք է վարվել այդ սարքավորման հետ:

13. Հետևել, վորպեսզի հրդեհային կոնտրոլ մասյանները պատշաճ ձևով տարվեն և ժամանակին դրանց յել հրդեհային ապահովության բոլոր հետաքրքրությունների և ստուգումների արդյունքները:

14. Հետևել, վորպեսզի շենքերի մոտ գտնվող հրդեհային հիդրանտները ժամանակին մաքրվեն, տեսանելի տեղերում փակցված լինեն հիդրանտների ուղեցույցները, հրդեհային պահպանության հեռախոսի համարները և բացատրություն այն մասին, թե ինչպես պետք է կանչել հրշեջներին:

15. Հրդեհ կամ խորտակում առաջ գալու դեպքում պետք է այդ մասին անմիջապես հայտնել հրդեհային պահպանության, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով աջակցող բիրիգի և բնակիչների ուժերով լիկվիդացիայի յենթարկելու հրդեհը կամ խորտակումը, ինչպես և ոգնություն հասցնելով տուժողներին, դիմավորել հրշեջ խմբին և հետագայում ոգնել նրան կողմակերպելու բնակիչների դույլի պահպանության գործը:

16. Զանազան տեսակի հրդեհների ժամանակ պետք է լավ հիշել հետևյալ հիմնական կանոնները, սովորեցնել տան բնակիչներին և անշեղորեն հետևել անհրաժեշտ դեպքերում՝ չկորցնել իրեն, շարժվել արագ, լինել վճռական և հանդիստ, սահմանված ձևով կանչել հրդեհային պահպանության, խուճապ առաջ չբերել, չրդավել, ապակիները չջարդել, դռները բաց չանել և դրանով հոսանք չստեղծել կրակի համար, դույլը փրկելիս չթողնել այդպիսին անցքերում, յելքերում և սանդուխքների վրա: Նախ և առաջ փրկել նրանց, ովքեր գտնվում են այրվող շենքերում, հեռացնել այն առարկաները, վորոնք կարող են այրվել, կրակը հանգցնել բոլոր ունեցած միջոցներով (ջրով, հրամարիչով, ավազով, վերմակներով և այլն):

17. Ակտիվ մասնակցություն ունենալ այն ինքնապաշտպանության խմբակներին և հրշեջ ոգային պահպանության խմբակներին, վորոնք կազմակերված են բնակվարձկոոպներին և այլ բնակիկազմակերպություններին կից, մշտական կապ հաստատել հրշեջ-ոգային պահպանության մարմինների հետ:

18. Նախապատրաստվել և տների բնակիչներին նախապատրաստել հրշեջ-ոգային պահպանության մարմիններին կազմակերպված ոգնություն և աջակցություն ցույց տալու համար: Լավ իմանալ ոգային հարձակման ազդանշանները և վազորոք սովորեցնել նաև տների բնակիչներին, պլակատներ, թռուցիկներ բաժանելու միջոցով, այլև սովորեցնել այն կանոններին, թե ինչպես պետք է վարվի բնակչությունն ոգային հարձակման ժամանակ:

19. Հետևել, վորպեսզի կարգին պահվեն ներքնահարկերը և գաղտապատանի համար ծառայելիք շենքերը, սարքավորել այդ շենքերն, ոգային հարձակման դեպքերի համար, մշակել բացահանության կարգը և ծանոթացնել տների բնակիչներին:

20. Հետևել, վորպեսզի յուրաքանչյուր բնակարան ապահովված լինի ջրի պաշարով հրդեհներ հանգցնելու համար այն դեպքում, յեթե ոգային հարձակման

ժամանակ ջրմուղը փակված կլինի և ծանաթացնել տը-
ների բնակիչներին այդ ձեռնարկումներին։

21. Ողային հարձակման ժամանակ կազմակերպ-
ված ձևով մտնել հրշեջ-ողային պահպանության կող-
մից բնակվարձկոռպներում և այլ բնակկազմակերպու-
թյուններում կազմված խմբակների մեջ, յենթարկվե-
լով այդ առթիվ սահմանված կարգին։

ՀՐԱՀԱՆԳ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱ-ՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴՐՎՈՒՄ Է ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐՁԱԿԱԼԻ ՎՐԱ, ՎՈՐԸ ՍԱՀՄԱՆ ՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԱՆՑ Է ԿԱՑՆՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ.

1. Չի թույլատրվում, վոր ոգտագործվեն վոչ
սարքին ջեռուցման գործիքներ, այն է՝ յեթե ծրխ-
անցքները ճեղքված-քներ ունեն, չկան յեկաթի թերթեր
վառարանների առաջ, չի պահպանված որինական բա-
ժանումը ծխանցքների և շենքի փայտի մասերի միջև։

2. Հետեվում է, վորպեսզի վառարանները ճիշտ
ոգտագործվեն, չի թույլատրվում այդպիսիները կերա-
սինով, բենզինով վառելը, վառած վառարաններն ա-
ռանց հսկողության թողնելը, վառարանների և ծրխ-
անցքների մոտ այրվող առարկաներ պահելը։

3. Չի թույլատրվում, վոր ելեքտրահաղորդումն
անսարք թողնվի և անուշադիր վերաբերմունք ցույց
տրվի դեպի այն, որինակ՝ ելեքտրալարերը բացված
տեղեր ունենան, ելեքտրացանցն ավելորդ լամպերով
ծանրաբեռնված լինեն, ինքնագործ պահպանակներ,
ժամանակավոր հաղորդում, լամպերի վրա թղթի չա-
պիկներ սարքված, ելեքտրալարերի վրա ավելորդ ա-
ռարկաներ կախված լինեն և այլն։

4. Չի թույլատրվում, վոր բնակարաններում այր-

վող հեղուկը բաց և ջարդվող ամաններում սամանվա-
ծից ավելի քանակությամբ (8 կիլո կերասին) պահվի։

5. Չի թույլատրվում, վոր այրվող հեղուկները
պահվեն վառած կերասինկաների, պրիմուսների և ընդ-
հանրապես բաց կրակի մոտ։

6. Չի թույլատրվում, վոր անկանոն վարվեն պրի-
մուսների և կերասինկաների հետ՝ չիկացած պրիմուսի
կամ վառած կերասինկայի մեջ այրվող հեղուկներ ա-
ծեն, չափից ավելի ոդ լցնեն (պրիմուսի կապյուլը
կեղտոտվելու, պրիմուսների և կերասինկաների խիստ
տաքացած լինելու դեպքում)։

7. Չի թույլատրվում, վոր պրիմուսներից և կերա-
սինկաներից ոգտվեն միջանցքներում, անցքերում, սան
դուխքների հարթակներում։

8. Կերասինի լուսավորություն ունենալու դեպ-
քում լամպերի բեղերվուվարները պետք է լինեն մե-
տաղյա ու կախվեն չսվաղված առաստաղից 0,70 սանտ.
հեռավորությամբ, ունենալով ապակու վրա պահպա-
նական չապիկ։

9. Չի թույլատրվում, վոր ընդհանուր ոգտագոր-
ծության մեջ անցքերը փակվեն վորևե առարկաներով,
թողնելով ճանապարհ վոչ պակաս քան 1 մետր լայնու-
թյամբ։

10. Չի թույլատրվում, վոր սանդուխքների և սան-
դուխքների հարթակների վրա պահվեն վորևե առար-
կաներ, ինչպես նաև սարքվեն նկուղներ կամ համբա-
բանոցներ։

11. Չի թույլատրվում, վոր վերնահարկերում
պահվեն վորևե առարկաներ կամ նյութեր, հետեվելով,
վորպեսզի պատուհաններն ապակված ու փակված լի-
նեն, իսկ դռները վերնահարկերում մշտապես կողպ-
ված։

12. Չի թույլատրվում, վոր բնակարաններում կամ
առանձին սենյակներում վորևե վերափոխում կատար-
վի առանց հրդեհային պահպանության թույլտվու-
թյան։

13. Անմիջապես միջոցներ է ձեռք առնում բնակա-

բաններում ծագած հրդեհը բնակիչների ուժերով և յեղած միջոցներով (դուլլեր, հրամարիչներ) հանգցնելու համար, անհապաղ հայտնելով այդ մասին հրշեջ խմբին. դրա համար բնակարանների յուրաքանչյուր հեռախոսի մոտ պետք է տախտակ կախված լինի հրշեջ խմբի հեռախոսի համարով:

14. Չի թույլատրվում, վոր հրդեհի ժամանակ, բնակարաններում, մինչև հրշեջ խմբի գալը, դռները բացվեն կամ ապակիները ջարդվեն ու դրանով ավելի հրդեհը սաստկանա:

15. Անմիջապես հայտնում է տնային վարչությանը և հասարակական լիազորին այն բոլոր բնակիչների մասին, վորոնք խախտում են հակահրդեհային կանոնները, համապատասխան՝ միջոցներ ձեռք առնելու համար:

16. Անչեղորեն անց և կացնում բնակարանում տնային վարչության կամ հասարակական լիազորի բոլոր այն առաջարկներն ու ցուցմունքները, վորոնք ապահովում են բնակարանները հրդեհից, ինչպես և մասնակցում է տնային վարչության և չենքի հասարակական լիազորի կողմից դումարված այն բոլոր խորհրդակցություններին, վորտեղ հրահանգներ են տրվում հրդեհային պահպանության հարցերի շուրջը:

ՀԱՍՐԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ—ССРА
Մշ. Ա. Մեսրոպյան
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0282004

13.953